«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գրավոր խոսքի զարգացումը եւ ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը մայրենիի (5-6-րդ դաս.) դասավանդման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Մկրտչյան Հռիփսիմե Ալբերտի
Դպրոց՝ «Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ.191 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ - 2023

Գրավոր խոսքի զարգացումը եւ ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը մայրենիի (5-6-րդ դաս.) դասավանդման գործընթացում

«Մայրենի լեզվի և գրականության ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի և քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում, ուստի հայոց լեզվի և գրականության դպրոցական դասընթացը, բուն լեզվական ու գրականագիտական գիտելիքներ տալուց բացի, պետք է գաղափար մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի ձևավորման գործում մայրենի լեզվի և գրականության դերի վերաբերյալ: Ուսումնական նյութերի հատուկ ընտրությամբ պետք է շեշտվի մայրենի լեզվի, հայ գրականության և մշակույթի կարևոր դերը ազգապահպանության գործում, հայոց լեզուն և գրականությունը բնորոշվեն որպես հայ ազգային մշակույթի արտահայտության բարձրագույն ձևը»: Այս մեջբերումը «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական առարկաների դասավանդման հայեցակարգից է, դրա կարևորագույն սկզբունքներից մեկը, որն ըստ իս՝ առավել կարևորվում է հատկապես 5-6-րդ դասարաններում «Մայրենի» ինտեգրված առարկայի ամենօրյա դասերի ընթացքում: Այդպես եմ կարծում, որովհետև երկար տարիներ դասավանդելով միջին և բարձր դասարաններում, համոզվել եմ, որ տարրական դասարաններում մայրենիից ստացած գիտելիքներն ամրապնդվում են նշված դասարաններում: Կարևորում եմ միասնականացված դասաժամերին ընթերցանության դերը: Կարդացածը ընկալելը, վերարտադրելու թեման քննարկելը, ինքնուրույն կարծիք կազմելը, կարծիքը հիմնավորում բխում են Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:

Ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի զարգացման դասերը, գործնական, հետազոտական, ինքնուրույն և խմբային աշխատանքները ծառայում են մայրենի լեզվի համալիր ուսուցմանը, լեզվական գիտելիքների կայուն գործածմանը, կարողությունների և հմտությունների հղկմանը: Մայրենիի դասընթացն ունի առանձնահատուկ դեր, այն ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոցն է: Ընթերցանության նյութերն աշակերտների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական և գրական ճաշակի զարգացման, հարակից առարկաների և աշխարհընկալման հիմնական գործնական և մատչելի գիտելիքների ձեռքբերման աղբյուրն են:

Հայոց լեզվի դասավանդումը հետապնդում է մի շարք խնդիրների լուծում, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

1. գրագիտության ուսուցում, անսխալ և վարժ գրելու, կարդալու հմտությունների ձևավորում (լեզվական գրագիտության կարողունակություն)
2. ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում.
3. աշակերտների բառապաշարի հարստացում, որը նպաստում է շրջապատող առարկաների և երևույթների ճանաչմանը.
4. տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության ձևավորում:

Մայրենիի առջև դրված բազում խնդիրներից իմ կողմից առանձնացվածները լուծում են պահանջում հատկապես 5-6-րդ դասարաններում, որովհետև այս դասարաններում ինտեգրված առարկայի ծրագրային հագեցվածությունը նախապատրաստում է աշակերտին հաջորդ դասարանում հայոց լեզու և գրականություն առարկաներն ուսումնասիրել որպես առանձին ուսումնական առարկաներ: Մայրենիի բանավոր և գրավոր դասերի բոլոր տեսակները, ներառյալ գործնական, արտադասարանային, որոնողական, խմբային և ինքնուրույն աշխատանքները նպաստում են հայոց լեզվից և գրականությունից հիմնավոր, խորը և բովանդակային գիտելիքների հաղորդմանը: Եվ այս աշխատատար ու հետաքրքիր գործընթացում հատկապես կարևոր են դառնում տարաբնույթ գրավոր, բանավոր աշխատանքները, որոնց բազում տեսակները ստեղծագործող ուսուցչին լայն հնարավորություններ են տալիս: Այս նպատակին են ծառայում հատկապես հայտորոշիչ, թեստերը, որոնք «ախտորոշիչ» դեր են կատարում, հայտնաբերում բացթողումները, նշում աշխատանքի ուղիները:

Շարադրությունների, փոխադրությունների, թելադրության որոշ տեսակների, ռեֆերատների, համառոտագրման, դիպաշարային հարցերի ձեւակերպման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով հմուտ ուսուցիչը զարգացնում և հղկում է աշակերտների կապակցված խոսք ստեղծելու, կարդացածը վերլուծելու և համադրելու կարողությունը : Գրավոր աշխատանքները տարաբնույթ են, իսկ դրանց նախապատրաստումը աշխատատար է, բայց հետաքրքիր ստեղծագործող ուսուցչի համար, որովհետև ուսուցմաներկու գործընթացն ընդհանրապես երկկողմանի փոխադարձ կապ է ենթադրում ուսուցչի և աշակերտի միջև: Այդ «երկխոսությունը»

առաջանում է դասի ընթացքում, հանպատրաստի գործընթաց է, որին նախորդում է դասի պլանավորումը առարկայական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Եթե ընթացիկ թեման ուղղագրությունից է, ապա ուսուցիչը հիմնական ուշադրությունը բևեռելով նորի վրա, շարունակ պետք է կրկնի նաև անցածը՝ աշակերտի հիշողության մեջ այն մշտապես թարմ պահելու նպատակով: Ցանկացած թեմատիկ (ստուգողական) աշխատանքին նախորդում են հակիրճ բառային թելադրությունների, հայտորոշիչ թեստեր, որոնք իրենց ծավալով, թելադրության դեպքում նաև ուղղագրական բառաքանակով երկու անգամ քիչ են ստուգողականի ծավալից: Այսինքն ենթադրվում է, որ ուսուցանող գնահատման համար նախատեսված գրավոր աշխատանքների նյութերը ամբողջությամբ պիտի յուրացվեն աշակերտների կողմից, ուսուցիչը այդ գրավորների անցկացման ընթացքում ավելի շատ պիտի բացատրի, հիշեցնի, օգնի, սովորեցնի, քան որևէ այլ դասի ընթացքում, որովհետև ուսուցողական գրավորի ժամանակ ամբողջ դասարանի ուշադրությունը կենտրոնացած է ուսուցչի խոսքի և կերպարի շուրջ: Եթե գրավոր աշխատանքը թելադրություն է, շատ կարևոր է, որ ուսուցիչը թելադրի դասարանի կենտրոնում կանգնած, որպեսզի նրա ձայնը բոլորին լսելի լինի, իր դիրքով աշակերտներին տրամադրի լուրջ աշխատանքի: Քանի որ խոսք գնաց թելարության մասին, տեղին է թվարկել ուսուցողական թելադրության տեսակներն ու դրանց նախապատրաստական աշխատանքները, այնուհետև կանդրադառնամ փոխադրությանը, շարադրությանը, աշխատանքին մյուս տեսակներին, դրանց նախապատրաստման, անցկացման առանձնահատկություններին:

Թելադրության տեսակները շատ են, դրանց մի մասն այսօր համարվում է հնացած, մասնագետներից շատերն էլ, ելնելով դասավանդման իրենց փորձից, կարևորում են նաև այդ տեսակները, ապացուցելով, որ ուսումնական գործընթացում հմտորեն կարելի է և ցանկալի է հին ու նոր ձևերը, նաև հին ու նոր մեթոդները համադրելով հասնել ցանկալի արդյունքի: Թելադրության տարբեր ձևերը հաջողությամբ և նպատակային անցկացնելու համար հայոց լեզվի ուսուցիչը պետք է ոչ միայն տեղյակ լինի դրանց բազմազան տեսակներին, նախապատրաստման ու անցկացման ձևերին, այլև իմանա, թե դրանք ուղղագրական կամ կետադրական ինչպիսի սխալները կանխելու համար պետք է անցկացվեն:

Կարճ բառային կամ բնագրային, ընտրովի, բացատրական թելադրությունները միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում ուղղագրական հմտության զարգացման գործում բացառապես ուսուցողական նպատակ ունեն, իսկ ստուգողական (թեմատիկ)

թելադրությունները՝ գերազանցապես աշակերտների՝ մայրենի լեզվի, գրավոր խոսքի գրագիտության աստիճանը պարզելու:

Միջին դասարաններում ուսուցողական թելադրությունները տարբեր են, և ուսուցիչը դրանցից որևէ մեկն ընտրելիս հստակ պետք է իմանա՝ ինչ նպատակ է դնում իր և աշակերտների առջև տվյալ գրավոր աշխատանքը նախապատրաստելիս: Երբեմն դասարանում հանպատրաստից կարելի է կազմակերպել թելադրություն, ելնելով օրվա թեմայից կազմակերպել խաղ շարքերի միջով, երբ աշակերտները իրար կթելադրեն ուղղագրական բառերը, ուսուցչի օգնությամբ կստուգեն տեղում, կօգնեն իրենց խմբի մյուս անդամներին: Այս դասի ընթացքում կզարգանա համագործակցային կարողունակություն, խմբային աշխատելու կարողությունը:

Ուսուցողական թելադրության բնագիրը կարելի է ընտրել տարբեր ձեռնարկներից՝ ելնելով դասարանի աշակերտների ընդունակություններից, կարողություններից, ընթացիկ թեմայից և գրավոր աշխատանքի նպատակից: Այս հարցում ուսուցիչն ազատ է: Սակայն հանձնարարելի է օգտվել ՀՀ ԿԳ նախարարության կողմից հավանության արժանացած «Թելադրության նյութերի ժողովածուից», որն անցել է մասնագիտական փորձագիտություն և կազմվել է՝ հաշվի առնելով տարբեր տարիքի սովորողների կարողությունները, նրանց առջև դրվող տարբերակված պահանջները:

Թելադրության տեսակները շատ են, դրանց մի մասը համարվում են հնացած, կարծում եմ՝ բոլոր տեսակներն էլ ծառայում են մի նպատակի: Ուսուցողական թելադրությունը հենց նրանով է ուսուցողական, որ ուսուցիչը գրավորի նախապատրաստման ժամանակ էլ ուսուցանի աշակերտին, բնագրի թելադրության ընթացքում ևս հետևի ուսուցման բարդ գործընթացին:

5-6-րդ դասարաններում բավականին արդյունավետ է նախազգուշական թելադրությունը, որի ժամանակ ուսուցիչը նախօրոք ընտրված բնագրից գրատախտակին գրել է տալիս ուղղագրական արժեք ունեցող բառերը: Այնուհետև հանձնարարում է այդ բառերով կազմել բառակապակցություններ, նախադասություններ: Բանավոր կրկնել է տալիս այդ բառերի գրության կանոնները, աշակերտները թվարկում են նույն կանոնին ենթարկվող միքանի բառեր, ուսուցիչը համոզվում է, որ դասարանը պատրաստ է գրավոր աշխատանքի: Մեկ անգամ կարդում է թելադրության բնագիրը, աշակերտներին զգուշացնում, որ գրատախտակին գրված բառերը չեն ջնջվելու, և աշակերտները գրելիս պետք է օգտվեն գրատախտակից: Այնուհեուև թելադրում է հանգիստ ձայնով, համբերատար,

չշտապեցնելով սովորողներին: Գրավորի այս տեսակը նպատակ ունի կանխել աշակերտների հնարավոր ուղղագրական սխալները: Տեսականորեն ուսուցողական գրավորներից անբավարար արդյունքներ չպետք է լինեն, իսկ եթե կան ուղղագրական սխալներով հագեցած գրավորներ, պետք է հասկանալ, թե ինչն է պատճառը, կամ ուսուցիչը անուշադիր է եղել, կամ աշակերտներն են անուշադիր եղել: Այս դեպքում նույն գրավորի սխալների շուրջ աշխատանք կատարելիս նպատակահարմար է գրատախտակի մոտ կանչել առավելագույն սխալներ արած աշակերտներին, նրանց առանձին բացատրել, անհատական աշխատանք տանել նրանց հետ, այդ ընթացքում դասարանին տալ առաջադրանք սխալ գրած բառերի շուրջ: Նման դեպքերում ես հանձնարարում եմ կատարել բառիմաստի շուրջ աշխատանք, աշակերտներին հանձնարարում եմ գտնել այդ բառերի հոմանիշները, հետո գրել հականիշները: Որպեսզի կանխեմ հնարավոր ուղղագրական սխալները, հուշում եմ, որ դասագրքի վերջում կա հոմանիշների և հականիշների բառարան, կարող են օգտվել բառարաններից: Աշակերտները սիրում են ինքնուրույն փնտրել և գտնել հանձնարարված բառերը, գրքից արտագրում են ճիշտ գրությամբ տրված հոմանիշները և հականիշները: Սովորաբար ուսուցողական աշխատանքներից հետո որպես տնային աշխատանք հանձնարարում եմ բառարաններից դուրս գրված բառերով կազմել նախադասություններ՝ չպարտադրելով բոլոր բառերն օգտագործել, թեման նույնպես թողնում եմ իրենց ընտրությանը: Հաջորդ օրը բոլորը դասին ներկայանում են տնային հանձնարարությունները կատարած, ավելին՝ մրցում են միմյանց հետ, թե ով է ավելի շատ նախադասություններ կազմել: Բնականաբար լսում են նրանց, կատարում ուսուցանող գնահատում: Տնային հանձնարարության այս ձևն օգտագործում եմ բոլոր գրավոր աշխատանքներից հետո: Թեմատիկ գրավորից հետո տետրերը հավաքում եմ, այնուհետև հարցնում աշակերտներին, թե ուղղագրական ինչ բառեր կային տեքստում, այդ բառերը գրում եմ գրատախտակին, իսկ աշակերտները գրում են տնային և դասարանական աշխատանքների տետրում, տեղում գրելու ընթացքում տեսնում են իրենց կատարած սխալը, գրատախտակից արտագրում ճիշտ գրված բառը: Եթե դասաժամը բավարարում է, այդ բառերով տեղում կազմել եմ տալիս բառակապակցություններ, իսկ տանը՝ նախադասություններ: Եթե դասաժամը չի բավարարում, երկու աշխատանք էլ թողնում եմ որպես տնային աշխատանք, որի կատարման ժամանակ ծնողները տեսնում են իրենց երեխաների կատարած սխալները, հետևում, որ ավելի ուշադիր գրեն տնային աշխատանքը:

Թելադրության հաճախ գործածվող տեսակներից է ինքնաթելադրությունը, որը կարելի է հանձնարարել միայն այն դեպքում, երբ համոզված ենք, որ հանձնարարված բանաստեղծությունը բոլորն են անգիր սովորել, հասկանում են դրա իմաստը, սահուն և անսխալ կարդում են՝ պահելով արտասանական կանոնները: Կարելի է տանը մեկ անգամ գրել տալ բանաստեղծությունը, ապա գրածը համեմատել բնագրի հետ, հիշել ուղղագրական և կետադրական համապատասխան կաոնները, ուղղել սխալ գրած բառերը: Նման տնային աշխատանքը մարզում է աշակերտների դիտողականությունը, ուշադրությունը, զարգացնում հիշողությունը, ընկալունակությունը:

Դպրոցում գրավորից առաջ մեկ-երկու աշակերտ անգիր արտասանում են բանաստեղծությունը, որից հետո ուսուցիչը հիշեցնում է կետադրական նշանների տեղն ու կանոնները, անհրաժեշտության դեպքում կարելի է ուղղագրական որոշ բառեր գրել գրատախտակին՝ հնարավոր սխալները կանխելու նպատակով: Նախապատրաստական այս աշխատանքներից հետո կարելի է հանձնարարել աշակերտներին գրել ինքնաթելադրությունը: Ցանկացած գրավորից հետո, ինքնաթելադրությունից հետո հատկապես աշակերտին հանձնարարվում է ստուգել գրածը առանց գրքին նայելու, ուղղել թույլ տված սխալները, որից հետո տետրերը պետք է հավաքել: Թելադրության այս տեսակը սովորաբար տրվում է 5-6-րդ դասարաններում՝ ելնելով տարիքային առանձնահատկութուններից: Ի տարբերություն այս մոտեցմանը «Մայրենի» միասնականացված դասերին, 7-9-րդ դասարաններում ուսուցողական թելադրություն տալիս հաճախ նպատակահարմար է լինում բացատրական և մեկնողական թելադրության տեսակներն ընտրել: Գրավորի այս երկու տեսակները շատ նման են իրար գրավորի անցկացման ձևի տեսակետից: Կա նաև տարբերություն: Բացատրական թելադրության ժամանակ ուսուցիչը բացատրում կամ հիշեցնում է աշակերտներին բարդ ուղղագրական գրություն ունեցող բառերի գրությունը, որի համար էլ թելադրությունը կոչվում է բացատրական: Կարելի է նաև գրատախտակին գրել ուղղագրական նույն կանոնին վերաբերվող բառազույգեր: Երբ աշակերտները կրկնեն ու բացատրեն գրության կանոնները, կարելի է սկսել թելադրել, շրջել դասարանում, հետևել աշակերտների գրածին, տեղում սխալ տեսնելիս ուղղել տալ: Քանի որ ուսուցողական թելադրության տեքստերը ծավալով փոքր են, դասաժամը բավարար է նման աշխատանք կատարելու համար:

Իր տեսակի մեջ բավական հետաքրքիր է մեկնողական թելադրությունը, որը շատ ուսուցիչներ շփոթում են բացատրական թելադրության հետ: Անձամբ ես խիստ սահմանազատումներ չեմ ուզում անցկացնել նրանց միջև, որովհետև վերջին հաշվով

երկուսն էլ ուսուցողական գրավորի տեսակներ են՝ նույն նպատակերով եմ վերջ արդյունքներով:

Մեկնողական թելադրության նախապատրաստական աշխատանքները նման են բացատրականին: Եթե բացատրական թելադրության ընթացքում հնարավոր սխալները կանխելու նպատակով ուսուցիչը հիշեցում է կատարում, ապա մեկնողական թելադրության ժամանակ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներից մեկին տալ բացատրություն: Շարունակելով թելադրել՝ ըստ անհրաժեշտության դադար է տալիս և մեկ ուրիշ աշակերտի հարցնում ուղղագրական բառի գրության ձևը, կետադրական կանոնը և այլն: Այս մանրակրկիտ աշխատանքը կատարվում է յուրաքանչյուր նախադասություն կարդալուց հետո՝ ամեն անգամ ընտրելով մեկ այլ աշակերտի: Եթե աշակերտը սխալվում է, կարելի է հարցնել մյուսին, կամ օգնել, ուղղել նախորդի պատասխանը: Ուսուցողական գրավորի այս տեսակը զարգացնում է աշակերտների ակտիվությունը, ինքնուրույնությունը, և ուսուցիչը շատ ժամանակ է ունենում գրավորի ընթացքում շրջելու, տեղում սխալներն ուղղելու համար: Գրավորի ժամանակ սովորողները հաճախ օգնում են իրար, մատնանշում իրենց կողմից նկատված սխալները :Չեմ արգելում նման քայլերը, ընդհակառակը, ոգեորում, խրախուսում եմ նման մոտեցումը:

Թելադրության մի քանի տեսակներ պարունակում են ստեղծագործական տարր, դրանք նպաստում են ինքնուրույն կապակցված խոսք կազմելուն, հիշողության և դիտողականության զարգացմանը: Դրանք ազատ և ստեղծագործական թելադրություններն են, որոնք հիշեցնում են փոխադրության նախապատրաստում: Գրավորի այս տեսակները նախապատրաստական լուրջ աշխատանք են պահանջում ուսուցչից: Ելնելով տվյալ դասարանի աշակերտների կարողություններից՝ նախապատրաստական աշխատանքը տարբեր ծավալների կարող է լինել: Ազատ թելադրության տեքստն ընտրվում է վերը նշված տեսանկյունից: Այն պետք է հակիրճ լինի, ուղղագրական բառերի սակավ քանակությամբ, աշակերտներին արդեն ծանոթ բառապաշարով: Դասի սկզբում բնագիրը մեկ անգամ կարդալուց հետո ուսուցիչը գրատախտակին գրում է բնագրի առաջին պարբերության մեջ եղած ուղղագրական բառերը: Այդ բառերի գրությունը բացատրելուց հետո կարդում է առաջին պարբերությունը և աշակերտներին հանձնարարում գրել այդ պարբերության բովանդակությունը՝ պարտադիր կերպով օգտագործելով գրատախտակին գրված բառերը: Բնականաբար լավ սովորող աշակերտները հաղթահարում են սկզբնական դժվարությունն ավելի արագ, իսկ ուսուցիչն այդ ընթացքում պետք է մոտենա մյուս

աշակերտներին և օգնի նրանց: Երբ բոլորը ավարտեն հանձնարարությունը, կարելի է անցնել երկրորդ պարբերությանը: Ի տարբերություն մյուս թելադրությունների՝ այս թելադրությունն ավարտելուց հետո ստուգիչ ընթերցում չի կատարվում: Ավելացնեմ, որ թելադրության այս տեսակը օգնում է սովորողներին լսածը մտապահելու և վերարտադրելու համար առավել ուշադիր լինել ուսուցչի կարդալու ընթացքում: Աշակերտները պարբերության բովանդակությունը շարադրելիս նաև ստեղծագործում են:

Աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգացնող ուսուցողական գրավորի տեսակ է նաև ստեղծագործական թելադրությունը: Սա ավելի աշխատատար նախապատրաստություն է պահանջում, գրավորի անցկացումն էլ հետևողական ուշադրություն է պարտադրում: Շատ աշակերտներ ունեցող դասարանում այս գրավորի անցկացումը բավական բարդ է, իսկ կիսվող դասարաններում աշխատանքը բավական արդյունավետ է ստացվում:

Ստեղծագործական գրավորից առաջ ուսուցիչը պետք է ընտրի ուղղագրական հագեցվածություն ունեցող երեքից հինգ բառախումբ որոշակի թեմայի շուրջ: Բառերը կարելի է ընտրել որևէ տեքստից, կամ աշակերտների հետ կազմել այդ բառախմբերը: Անձամբ ես նախընտրում եմ երկրորդ տարբերակը, որովհետև բառախմբերը ընտրելու պահից սկսած երեխան դառնում է դասի ակտիվ մասնակից, և դասի հաջորդ փուլերին բացահայտվում են նաև նրա տեքստ կառուցելու ունակությունները: Բառախմբերը պետք է գրել գրատախտակին առանձին սյունակներով, հատուկ պետք է բացատրել անծանոթ բառերի իմաստները, դրանց գրության ձևը, սա աշխատանքի առաջին փուլն է: Հաջորդ փուլում հանձնարարվում է առանձին թղթի վրա կազմել փոքրիկ տեքստ՝ առաջին խմբի բառերն օգտագործելով: Դասարանում շրջելով՝ ուսուցիչը հետևում է, որ բոլոր աշակերտները գրեն տեքստը: Հաջորդ փուլում ուսուցիչը ընտրում է աշակերտներից մի քանիսի գրած տեքստերը, դրանք կարդում են բարձրաձայն, ուսուցիչը հղկում է երեխաների գրածները: Հաջորդ փուլում հղկված և ընդհանուր հավանության արժանացած տեքստը ուսուցիչը բարձրաձայն թելադրում է ամբողջ դասարանին: Հաջորդաբար նույն եղանակով տեքստեր են կազմվում մյուս բառախմբերով և մաս-մաս թելադրվում բոլորին: Գրավորն ավարտելուց հետո ուսուցիչը մեկ անգամ ևս կարդում է ընդհանուր ուժերով կազմված տեքստը, աշակերտները ուղղում են իրենց գրածները, տետրերը հանձնում: Գրավորը կարելի անցկացնել նաեւ խմբային մեթոդով, խմբերին տալ հանձնարարություն, հետո ամբողջացնել:

Հետաքրքիր գրավորի տեսակ է ընտրովի թելադրությունը: Որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս գրավորի այս տեսակը անցկացնել որպես ընթացիկ վարժություն (բանավոր կամ գրավոր): Ամեն դեպքում ընտրովի թելադրությունը ուսուցանում և ամրապնդում է ընթացիկ ուսումնական թեման և ուղղագրությունից, և քերականությունից: Այս գրավորի տեքստը պետք է լինի հակիրճ, հագեցած լինի ուղղագրական բառերով և ամրապնդի անցած նյութը: Ուսուցիչը նախապես գրատախտակին պետք է գրի հստակ ձևակերպված պահանջը, թե աշակերտները թելադրության տեքստից ինչ պետք է դուրս գրեն: Ուսուցիչը կարդում է դանդաղ, մի քանի անգամ, որպեսզի աշակերտները մտապահեն նախադասությունները, դրանցից դուրս գրեն պահանջվող բառերը: Թելադրելն ավարտելուց հետո ուսուցիչը դանդաղ մեկ անգամ էլ է կարդում տեքստը, ընդհատում ընթերցումը, աշակերտները իրենց տետրերից կարդում են դուրս գրված բառերը, կատարում ուղղումներ և լրացումներ: Այսպիսով բոլոր աշակերտները մասնակցում են դասին: Ընտրովի թելադրությունը տարբերվում է թելադրության մյուս տեսակներից նրանով, որ ուսուցողական աշխատանքը իրականանում է երեք փուլով՝ նախապատրաստման, բուն թելադրության և գրավորի ավարտական ստուգիչ ընթերցման ժամանակ: Գրավորի այս տեսակը խորհուրդ է տրվում անցկացնել թեմայի ուսուցման ընթացքում, որպես թեմայի ամրապնդման միջոց: Այս Գրավորը կարելի է փոխարինել հարցաշարային աշխատանքով, հաշվի առնել դասարանի առանձնահատկությունները:

Ընտրովի թելադրության անցկացման ձևերը շատ են, ուսուցիչն ազատ է ընտրելու դրանցից որևէ մեկը, ինքը նոր ձև ստեղծել կամ միացնել թելադրության երկու տարբեր տեսակները և անցկանել համակցված թելադրություն: Ամենօրյա դասապրոցեսում հաճախ այդպես էլ լինում է ինքնաբերաբար, պահի թելադրանքով, նաև գրավորի նախապատրաստման ընթացքում ուսուցիչը օրվա պլանը գրելիս ընտրում է գրավորի տեսակը, մշակում դասի պլանը փուլերով՝ համակցելով երկու տարբեր գրավորներ: Նման համակցումները մեծ օգուտ են բերում ուղղագրության ուսուցման գործին, որովհետև նախազգուշական-բացատրական, ընտրովի-բացատրական, ստեղծագործական-բացատրական թելադրության ընթացքում աշակերտը միաժամանակ լսում է և տեսնում գրատախտակին գրվածը: Համակված թելադրությունները առավել արդյունավետ են 5-9-րդ դասարաններում՝ որպես ուսուցողական գրավոր, որի նախապատրաստունը նման է նախորդ գրավորների նախապատրաստական փուլին:

Հիմնական դպրոցի միջին դասարանների աշակերտների համար բավական հետաքրքիր գրավոր աշխատանք է բառային թեադրությունը, որը զուտ ուղղագրական նպատակ է հետապնդում, ուսուցիչը թելադրում է ուղղագական բառախումբ: Այդ աշխատանքի համար կարելի է հատկացնել դասի 10-15 րոպեն, կարելի նաև նույն կանոնի բառեր հանձնարարել հիշել և ավելացնել գրածին: Յուրաքանչյուր կանոնից կարելի է ավելացնել մեկ կամ երկու բառ:

Բառ-թելադրությունը հիմականում ծառայում է աշակերտի բառապաշարի հարստացմանը: Ուսուցողական բառ-թելադրության համար բառեր կարելի է ընտրել ընթերցանության դասագրքի տարբեր դասերից, բառատետրից, անցած դասերից, մայրենիի դասագրքի բառարաններից: Բառային թելադրութունը և բառ-թելադրութունը նախատեսում են թելադրվող բառերի որոշակի քանակ: Այս գրավորին նախապատրաստվելիս ուսուցիչը ընտրում է բառախումբը, որը պետք է թելադրի, և մշակում է դասի անցկացման փուլերը հաջորդաբար՝մինչև վերջնական նպատակ: Հաջորդ օրը դասարանում գրավորի հենց սկզբից թելադրում է բառերը և հարցնում աշակերտներին, թե որ բառի իմաստը չեն հասկանում: Բառն անծանոթ լինլու դեպքում ուսուցիչը մանրամասն բացատրում է՝ թվարկելով բառի հոմանիշները: Դրանք գրատախտակին գրել է տալիս սյունակներով: Աշակերտները հիշում են ուղղագրական կանոնը, այդ բառերով բանավոր կազմում նախադասություններ: Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գրվածը մաքրում է և հանձնարարում աշակերտներին տետրերում գրել այդ բառերը, որոնք ուսուցիչը թելադրում է: Աշակերտները յուրաքանչյուր բառի համար գրում են երեք հոմանիշ, իսկ եթե բառը հնարավոր չէ հոմանիշով բացատրել, ապա կարելի գրել բացատրող բառակապակցություն: Նախորդ գրավորների նման այս դեպքում էլ ուսուցիչը շրջում է, հետևում ճիշտ գրելուն, ըստ անհրաժեշտության՝ տեղում ուղղում սխալները: Բառթելադրությունը կարելի էանցկացնել նաև տեքստի ձևով, որի մեջ ընդգծված են բացատրություն պահանջող բառերը: Այս դեպքում աշակերտները ավելի հեշտությամբ են կատարում առաջադրանքը, քանի որ ընդգծված բառերի հոմանիշները կամ բացատրությունները գտնում են հենց տեքստի օգնությամբ:

Թելադրությունից բացի ուսուցողական նպատակներով ուսուցիչը կարող է տարաբնույթ այլ գրավորներ հանձնարարել՝ փոխադրություն, շարադրություն, հարցաշարային աշխատանք:

Հարցաշարային աշխատանքը կարելի անցկացնել տարբերակներով՝ տարբեր բարդության առաջադրանքներ ընդգրկելով թեստի մեջ: Այն փաստարկը, որ թեստերի

միջոցով ավելի հեշտ է ստուգել աշակերտների գիտելիքները, երկար տարիներ մասնագետների վիճաբանությունների պատճառ էր դառնում: Որպես ուսուցողական գրավոր աշխատանքի տեսակ կարծում եմ, որ կարելի է օգտագործել՝ ելնելով թեմայից, թեմայի յուրացման մակարդակից և շատ այլ ուսումնական նպատակներից: Ի վերջո՝ նման աշխատանքը ուսուցչին օգնում է պարզելու՝ որքանով են աշակերտները ինքնուրույն աշխատում, ակտիվ են թեստը լրացնելիս, թե պասիվ վիճակում սպասում են իրեց ընկերների օգնությանը: Ընդհանուր առմամբ թեստերի վրա աշխատելը գրավիչ և վարակիչ ազդեցություն ունի սովորողների վրա: Հարցաշարային ուսուցողական գրավորը նախապատրաստելուց առաջ ուսուցիչը պետք է հստակեցնի գրավորի նպատակը, որոշի թեստի տեսակի ընտրությունը: Ըստ իրենց նպատակների թեստերը լինում են.

1. Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստեր (թեմայի ավարտին, կիսամյակի, ուսումնական տարվա վերջում):
2. Առաջդիմության ստուգման թեստեր (ընթացիկ դասանյութի, թեմայի, կիսամյակի, տարվա վերջում):
3. Հայտորոշիչ (տրվում են պարբերաբար՝ որոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով):
4. Տեղակայման (տրվում է դասընթացի սկզբում՝սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների դասակարգելու համար):

Բոլոր տեստերը պետք է պարունակեն տասական առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է «1» միավոր, իսկ սխալը՝ «0»:

Ելնելով վերը շարադրվածից՝ որպես մայրենի լեզվի ուսուցմանառաջատար սկզբունքային պահանջներ՝ պետք է ընտրել աշակերտի մտավոր և լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացման արդյունավետ ձևերի ու եղանակների կիրառումը, կապակցված ամբողջական խոսքի կամ խոսքի հատվածների հիման վրա համապատասխան իրողությունների, հասկացությունների և կանոնների պարզաբանումները, բանավոր և գրավոր խասքի կատարելագործումը, վերակառուցումը, հղկումը, մշակումն ու զարգացումը:

Նկատի պետք է առնել, որ այսօր գործածության մեջ գտնվող բոլոր դասագրքերը, տալով ուսումնական նյութի կառուցվածքն ու բովանդակությունը, մատնանշելով թեմանաներն ուսուցանելու հիմնական ուղին, ստեղծագործող ուսուցչի համար հնարավորություններ են ստեղծում նախընտրել մեթոդական հնարներ, մեթոդների կիրառման նպատակահարմար ձևեր՝ աշակերտների ինքնուրույնությունը,

գործունեության նպատակահարմար ուղիներ ապահովելու, լեզվական գրագիտություն զարգացնելու համար:

Աշակերտի գրավոր խոսքի զարգացման լավագույն միջոցներից մեկը փոխադրությունն է: Փոխադրություն գրելիս աշակերտները վերարտադրում են գրական որևէ ստեղծագործության բովանդակությունը: Եվ դա փաստորեն մի տեսակ կամուրջ է դառնում անցնելու ինքնուրույն վերլուծական-քննադատական շարադրությունների: Այդ է հիմնական պատճառը, որ փոխադրություններն ավելի շատ տրվում են ցածր դասարաններում, երբ աշակերտները դեռևս դժվարանում են ինքնուրույն շարադրություններ գրել:

Փոխադրությունները լինում են ուսուցողական և թեմատիկ (ստուգողական):

Փոխադրության արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի նախապատրաստական աշխատանքից:

Ասենք՝ եթե ուսուցիչը նպատակ է հետապնդում կայունացնել ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի վերաբերյալ աշակերտների գիտելիքները, նա պետք է ընտրի այնպիսի տեքստ, որը հագեցած է նման օրինակներով և հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս անդրադառնալով այդ հարցին, ամրապնդել աշակերտների գիտելիքները, դրանք վերածել հմտության: Անհրաժեշտ է նախօրոք ուսումնասիրել տեքստը, որոշել, թե որ բառերը պետք է բացատրել, որ արտահայտությունները ցուցադրել, տեքստին առնչվող անցած քերականական որ օրինաչափությունները հիշեցնել և այլն:

Ուսուցիչը փոխադրության նյութը դասարանում կարդում է երկու անգամ՝ պաշտպանելով ուղղախոսության բոլոր օրինաչափությունները: Կարդալուն հաջորդում է անծանոթ և դժվար ուղղագրություն ունեցող բառերի բացատրությունը: Այդ բառերը գրվում են գրատախտակին և զգուշացվում, որ աշակերտները պարտավոր են դրանք օգտագործել իրենց գրավոր աշխատանքում:

Բառերի բացատրությունից հետո, աշակերտների ակտիվ մասնակցությամբ, մշակվում է տեքստը, կազմվում պլան և գրվում գրատախտակին: Այնուհետև մեկ-երկու աշակերտ պատմում են նյութը, որից հետո ուսուցիչը հանձնարարում է գրել: Ինչպես պլանը կազմելիս, այնպես էլ պատմելիս ու գրելիս, պետք է հետևել, որ աշակերտները վարժվեն ճիշտ և գեղեցիկ խոսք կառուցելուն: Սա ես բխում է առարկայական չափորոշչի պահանջներից:

Փոխադրության գրավորների վերլուծման ժամանակ, ուղղագրական և կետադրական սխալներին անդրադառնալիս, պետք է միաժամանակ բացատրել

երեխայի գրավոր աշխատանքում եղած շարահյուսական, լեզվական յուրաքանչյուր անհարթությունն ու սխալը, ցուցադրել դրանց համապատասխան ճիշտ ձևերը և աստիճանաբար զարգացնել երեխայի լեզվական կարողությունները: Յուրաքանչյուր գրավորի նախապատրաստումն ու սխալների վերլուծությունը մայրենիի ուսուցման կարևոր պայմաններ են, որովհետև հետևողական աշխատանքի դեպքում ուսուցիչը և աշակերտները հասնում են դասի նպատակի իրականացմանը մի քանի փուլերով, որոնց ավարտին ձեւավորվում են կարողունակություններն ու հմտությունները:

Փոխադրության տեքստերը տարբեր բովանդակություն ու կառուցվածք կարող են ունենալ: Հիմնականում այդ տեքստերն ընտրում ենք փոխադրության տարբեր տարիներին հրատարակված ձեռնարկներից, ցանկության դեպքում, ելնելով դասի նպատակից և ընթացիկ ուսումնական նյութից, ցանկացած բնագիր կարող է դառնալ փոխադրության համար տեքստ: Փոխադրությունները հին ձեռնարկներում հիմնական դպրոցի ցածր դասարանների համար հանձնարարվում էին նկարագրական, բնութագրական, պատմողական տեքստեր, կից տրվում էին պլանների նմուշներ և բառախմբերի բացատրություններ: Այսօր փոխադրության նյութերի մի քանի ձեռնարկներից հատուկ առանձնացնում եմ ամենավերջինը, հեղինակներ Թ.Թովմասյան և Գ.Մկրտչյան «Փոխադրության նյութերի ժողովածու» 5-9-րդ դասարանների համար գիրքը, որը նոր խոսք է գրավորի այդ տեսակի առանձնահատկությունների, նախապատրաստման և անցկացման ձևերի ու հնարավորությունների մասին: Ներածությունը ներկայացված է նոր մոտեցումով, մանրամասն բացատրություններով: Հեղինակները ուսուցչին ընձեռում են ազատ ստեղծագործելու հնարավորություն՝ դրա համար գիրքը դարձնելով պատրաստի ուղեցույց, չպարտադրելով որևէ քարացած պայմանականություն, տալիս են հետաքրքիր հուշումներ, հորինելու, վերլուծելու, համադրելու պարարտ հող թողնելով ուսուցչին և աշակերտին: Գիրքը հագեցած է տարաբնույթ բնագրերով, որոնք էլ ապահովելու են փոխադրության բոլոր տեսակների ուսուցումը: Անկախ գրավորի տեսակի ընտրությունից՝պատմողական, վերարտադրողական, նկարագրական՝ մեկնաբանություններով, ստեղծագործական՝ այլ սյուժեներով, գիրքը և հեղինակները չեն սահմանափակում աշակերտի ստեղծագործական միտքը: Ընդհակառակը, երեխայի մտքին ազատ թռիչքի համար հուշումներ, ասել է թե ազդակներ են տալիս՝ նպաստելով փոխադրությունից ստեղծագործական շարադրություն անցումին: Մեջբերում եմ. «փոխադրությունը՝ որպես գրավորի տեսակ, նման է շարադրությանն այնքանով, որ սովորողն իր դատողություններն ու ապրումներն է շարադրում, ինչպես

շարադրությունում: Շարադրությունից տարբերվում է նրանով, որ որոշակի սյուժեի սահմաններում է ստեղծագործում: Այն շարադրության անցնելու նախապատրաստական փուլ է»: Մեջբերումը նշածս գրքից է:

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր և բանավոր խոսքի զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման, խոսքի մշակույթի կատարելագործման գործում:

Ցավոք, այսօր շատ աշակերտներ՝ տարբեր դասարաններում սովորող, դժվարանում են ստեղծագործական շարադրություններ գրել, իրենց մըտքերն ու դատողությունները պարզ, հստակ ու մատչելի արտահայտել, զգացածի ու տեսածի մասին գրագետ շարադրել կամ պատմել: Դրա պատճառները շատ են:

Աշակերտներին օգնելու և կողմնորոշելու, նրանց ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով թեև հրատարակվել են շարադրությունների մի քանի ձեռնարկներ, բայց արմատապես և կտրուկ չեն փոխում վիճակը: Մեզ՝դասավանդող ուսուցիչներիս մնում էզինվել համբերությամբ և ամեն ինչ անել աշակերտի գրավոր կապակցված խոսքը հղկելու և զարգացնելու համար: Լեզվական գրագիտությունը այսօր հանրակրթության առաջնահերթություններից մեկն է:

Ամենից առաջ նշենք, որ ստեղծագործական շարադրություններն ըստ բնույթի հիմնականում լինում են երեք տեսակի՝ պատմողական, նկարագրական և դատողական: Դրանց սահմանները հստակ գծել, որոշել հնարավոր չէ: Այդպիսի շարադրությունները կոչվում են համակցված:

Ամենահեշտը և տարածվածը պատմողական շարադրությունն է, որի մեջ պատմվում է որևէ դեպքի, երևույթի մասին, որն ունենում է հաղորդման սկիզբ, զարգացում և ավարտ: Աշակերտին պետք է սովորեցնել վարժ ու անկաշկանդ գրել իր հետ կատարվածի մասին, պարզ, մատչելի ու շարադրի իր տեսածն ու լսածը, զգացածն ու ապրածը (ասենք՝տրված նկարի բովանդակությունը, արշավից ստացած իր տպավորությունները՝ վերնագրելով «Մի անգամ անտառում», «Մի դեպք իմ կյանքից» և այլն): Այսպիսի շարադրություն գրելուն նախապատրաստելու համար կարելի է լայնորեն օգտագործել ինչպես դասագրքերի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության նյութերի հնարավորությունները: Սովորողները նախ պետք է պատմեն, ապա նոր միայն փորձեն այն շարադրել՝ հորինելով նմանօրինակ դիպաշար կամ գրել իրենց հետ կատարված հետաքրքրական դեպքի մասին:

Նկարագրական շարադրությունն ունի այլ կառուցվածք. սկզբում հաղորդվում են նկարագրվող երևույթից կամ առարկայից ստացած տպավորությունները, իսկ վերջում տրվում է գնահատականը կամ եզրակացությունը: Նկարագրական շարադրություն գրելու համար աշակերտները պետք է ուշադիր ու մանրամասն դիտեն իրենց շրջապատը, առարկաներն ու երևույթները, նկատեն բնության փոփոխությունները, թե ինչպես է արևը դուրս գալիս՝ ծագում, ինչպես է անձրևը տեղատարափ թափվում, ինչպես է քամին քշում դեղնած տերևները: Կամ՝ ինչ դիրք ու կառուցվածք ունի նկարագրվող վանքը, եկեղեցին և այլն: Այդ ամենը գեղեցիկ ու արտահայտիչ վերարտադրելու, նկարագրելու համար սովորողները պետք է օգտագործեն համապատասխան մակդիրներ՝ ոսկեզօծ, հրաշեկ, անսանձ, տեղատարափ, գմբեթարդ, շքեղ, զանազան համեմատություններ ու փոխաբերություններ:

Նկարագրական-պատմողական շարադրության մի տեսակ է նկարի շուրջ տրվող աշխատանքը, որը մեծապես նպաստում է նկարը կարդալու, արժևորելու նկարի մեջ պատկերված երևույթները, դրանց միջև եղած կապերը նկատելու, կռահելու, նկարի բովանդակությունն ու իմաստը: Նման ձևով կարելի է դասարանում հանձնարարել նաև շարադրություն գրել միասին կամ առանձին դիտած կինոնկարի շուրջ: Իհարկե երկու դեպքերում էլ ուսուցիչը պետք է ուղղություն տա և կարդա համապատասխան բնագիր անհրաժեշտ բառախմբով՝ որպես օգնություն աշակերտի բառապաշարի հարստացման նպատակով:

Դատողական շարադրությունը կառուցվածքով տարբերվում է նախորդներից: Պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից՝ ընդհանուր վիճակը բացահայտող մաս՝ դրույթ, ապացույցներ պարունակող մաս և եզրակացություններ: Դատողական շարադրություն գրելը համեմատաբար դժվար է և տրվում է բարձր դասարաններում (օրինակ՝ հայրեասիրության, հերոսության, ամենակարող լինելու, հացի պաշտամունքի և այլ թեմաներով): Այսպիսի շարադրություն գրողը պետք է փաստերով ապացուցի իր առաջ քաշած դրույթի ճշմարտացիությունը, մտքում ունենա շարադրանքի պլանը, հստակ պատկերացնի նրա սկիզբը, ընթացքը և ավարտը, որոնք շարադրանքի կարևոր փուլերն են: Դատողական շարադրություն հանձնարարելուց առաջ ուսուցիչը պետք է նմանօրինակ շարադրություններ կարդա, ցույց տա դրանց պահանջներն ու նրբությունները: Այդ բանին կարող են օգնել նաև տրված սկիզբով կամ վերջով շարադրությունները: Այս տիպի շարադրությունները հավասարապես կարելի է հանձնարարել ցածր և բարձր դասարաններում: Բավականին հետաքրքիր է ստացվում

աշխատանքի ընթացքը: Երկու դեպքերում էլ աշակերտները առաջարկում են տարբեր սկիզբ և ավարտ: Դասարանում բարձրաձայն կարդալուց հետո այդ շարադրությունների շուրջ աշխույժ քննարկում է ծագում, աշակերտները հիմնավորում են իրենց հորինածը, հետաքրքրությամբ լսելով նաև իրենց ընկերների տարբերակները:

Շարադրության մյուս տեսակը ստեղծվում է տրված բառերով ու բառակապակցություններով: Գրավորից առաջ ուսուցիչը նախապես թելադրում է շարադրության նյութին առնչվող 12-15 բառ և բառակապակցություն, որից հետո պահանջում է գրել շարադրություն: Այսպիսի շարադրությունների թեմաներն ու տեսակները տարաբնույթ են՝ նամակ-շարադրություն, որը աշակերտները գրում են որևէ գրողի կամ նրա ստեղծած հերոսի: Այս տիպի շարադրությունները նպաստում են, որ աշակերտն ի մի բերի, ամփոփ ներկայացնի, վերլուծի տվյալ գրողի ստեղծագործությունը կամ այս-այն գործը: Եթե ցածր դասարաններում սովորաբար հանձնարարվում են շարադրություններ գրել իրենց մայրիկի, առաջին ուուցչուհու, ընտանիքի անդամների, նույնիսկ տնային կենդանիների մասին, ապա 5-6-րդ դասարանների աշակերտներին պետք է հանձնարարել շարադրություններ իրենց երազանքների, ապագայի, ընտրած մասնագիտության, նշանավոր մարդկանց օրինակին հետևելու, ընկերասիրության, երջանկության վերաբերյալ իրենց պատկերացումների մասին: Բոլոր շարադրությունների նյութերը պետք է վերցված լինեն աշակերտների կյանքից, առօրյայից, բնությունից, շրջաատից և ծառայեն սովորողների գեղեցիկ և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունների, ունակությունների ու տրամաբանության զարգացմանը: Պետք է տրվեն այնպիսի տեղծագործական շարադրություններ, որ աշակերտները կարողանան հիմնավորված եզրահանգումներ անել, պատկերավոր ու գեղեցիկ նկարագրել իրենց տեսածն ու զգացածը, խուսափել մտքի կրկնություններից, անհարկի շեղումներից: Յուրաքանչյուր շարադրություն պետք է կուռ ու ամբողջական լինի:

Նկարագրվող երևույթների մեջ փոխադարձ և ներքին տրամաբանական կապ պիտի լինի: Աշակերտը գրածի նկատմամբ պետք է հանդես բերի քննադատական վերաբերմունք, ինքն իրեն ստուգելու և անաչառ գնահատելու կարողություն: Դրա համար ուուցիչը պետք է պահանջի, որ յուրաքանչյուր աշակերտ կարդա, խմբագրի, ուղղի իր սխալները, բարեփոխի մտքերի ձևակերպումները:

Շատ կարևոր է ստեղծագործական շարադրությունների ստուգումն ու վերլուծությունը դասարանում, հատակապես ուսուցողական գրավորի դեպքում:

Ուսուցիչը պետք է ոչ միայն ուղղագրական և կետադրական սխալները ցույց տա, այլևոճական ու մտքի սխալները և անհրաժեշտության դեպքում ուղղի, շտկի և գրի իր տարբերակը: Ցանկալի է, որ ուսուցիչը համեմատություն անցկացնի տարբեր աշակերտների գրած շարադրությունների միջև, նշի դրանց ուժեղ և թույլ կողմերը, հաջողված ու թերի մասերը, դասարանում բարձրաձայն կարդա լավագույն շարադրությունները կամ դրանց առանձին հատվածները:

Եզրակացություն

Մայրենիի, հայոց լեզվի և գրականության, ցանկացած առարկայի դաս կուռ միասնական համակարգ է՝ լսողական, տեսողական, դատողական խթանիչներով, որոնք փոխկապակցված են, քանի որ առաջինների դեպքում լեզվական նյութին զուգահեռ զարգանում են զգալու, ըմբռնելու, վերլուծելու, քննարկելու ունակություններ, ձևավորում պատկերավոր մտածողություն: Ուսումնասիրվող գրական երկի և շրջապատող աշխարհի միջև չպետք է խորանա անջրպետը, այլ պետք է ստեղծվի կամուրջ, որպեսզի անցումը լինի սահուն և գիտակից:

Ուսուցման այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս լուծել նաև սոցիալական խնդիրներ, այսինքն՝ ակադեմիական գիտելիքներ ձեռք բերելով, հմտանալ գործնական կիրառման մեջ, որպեսզի աշակերտը դառնա հանրության լիիրավ անդամ, համագործակցող, կյանքի փոփոխություններին հարմարվող և ճկուն ձևով արձագանքող անհատ:

Ուսումնական գործընթացը փոխներգործուն է սովորողի և ուսուցչի համար, ունի խթանիչ դեր: Դասի ընթացքում ստեղծագործում է ուսուցիչը՝ մասնակից դարձնելով աշակերտին, արդյունքում ունենում է արդյունավետ դաս, հայեցի դաստիարակություն, բազմակողմանի իմացությամբ աշակերտ:

Մայրենիի ուսուցչի գերագույն նատակն այսօր հայրենասեր, ազգասեր, խոհեմ և ուշիմ սերունդ դաստիարակելն է: Դասը պլանավորելիս նա պետք է հաշվի առնի դասագրքերի կառուցման սկզբունքները, ինչպես նաև զուգահեռներ գտնի, որոնք էլ հնարավորություն են տալիս ձևավորել գործնական կիրառմանհմտություններ: Անկախ դասի տեսակից՝ յուրաքանչյուր դասանյութ պետք է ունենա նախօրոք մշակված մատուցման նպատակ, որովհետև մայրենիի ուսուցումը բխում է աշակերտի անմիջական հետաքրքրություններից, հենվում է նախկինում ձեռք բերած փորձի, գիտելիքների և կարողությունների վրա, համապատասխանում է տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին:

Եվ որպես ամփոփում՝ ուսուցումը պետք է լինի նպատակաուղղված. այն է՝ զինել գիտելիքներով՝ փնտրելու, բացահայտելու ունակությամբ, օժտել սեփական արժանապատվությունը գիտակցող, ազգային արժեքներն արժևորող առանձնահատկությամբ, վստահություն ներշնչել՝ կյանքում կիրառելու ձեռք բերվածը՝

ինքնադրսևորման կայուն գիտակցությամբ: Պետք է կարևորել ազգային սրբությունները:

Գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, առարկայական չափորոշիչ:
2. «Թելադրության նյութերի ժողովածու» բոլոր հրատարակությունները
3. «Փոխադրության նյութերի ժողովածու» բորոր հրատարակությունները
4. «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու» 5-9-րդ դասարանների համար Ն. վիրաբյան, Լ.Մարգրյան
5. «Փոխադրության նյութերի ժողովածու» 5-9-դասարանների համար Թ.Թովմասյան, Գ. Մկրտչյան Երևան, 2018թ.:
6. «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, 2015, 2016, 2017թթ.